




UNIBANK

2022

Տ Ա Ր Ե Կ Ա Ն
Հ Ա Ն Կ Ե Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն





Դասանեփուքյուն և պաշպանություն



Մատենադարանի դռները, որի հեղինակը ճարտարապետ Աշոտ Ղազարյանն է միջնադարյան Հայկական եկեղեցաշինության կարևոր գարդանախշեր է կրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՑ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԴՈՒՅԹ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԺԵՔՆԵՐԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՐ ԹԻՄԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ


ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2022թ.-ին կազմել են 8,410 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20%-ով կամ 1,403 մլրդ ՀՀ դրամով: Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2022թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 4,167 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 4.4%-ով 2021թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ: Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 16.5%-ով կազմելով 1,005 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2022թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 4,941 մլրդ ՀՀ դրամ, ինչը 26.7%-ով կամ 1,042 մլրդ դրամով ավել է 2021թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից: ՀՀ բանկային համակարգի շահույթը 2022թ.-ին կազմել է 263 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա դիմաց, ինչը 4,5 անգամ կամ 205 մլրդ դրամով ավել է 2021թ. տվյալ ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ:

Բանկային համակարգի ցուցանիշների դինամիկան և դրանց հարաբերակցությունը ՀՆԱ-ին



ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն 2022 թվականին Հայաստանում տնտեսական աճը կազմել է 12,6 տոկոս: ՀՆԱ-ի ծավալը 2022 թվականին կազմել է 8,497 մլրդ ՀՀ դրամ կամ 19,5 մլրդ դոլար: Հայաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2022 թվականին կազմել է 2,862 հազար ՀՀ դրամ (6,569 ԱՄՆ դոլար)՝ 2021 թվականի 2,357 հազար ՀՀ դրամի (4,679 ԱՄՆ դոլար) դիմաց: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների համաձայն, 2022 թվականին բանկային համակարգի ակտիվների հարաբերակցությունը Հայաստանի ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 98,7%, իսկ վարկային ներդրումները ՀՆԱ-ի նկատմամբ՝ 46%, 2021 թվականի համապատասխանաբար 101% և 53%-ի դիմաց: Անցած 10 տարիների ընթացքում (2012-ից 2022 թվականներին) բանկային համակարգի ակտիվներն աճել են 3,5 անգամ, վարկերը՝ 2,6 անգամ, ավանդները՝ 4,1 անգամ:

2022 թվականի արդյունքներով Յունիբանկն ապահովեց հետևյալ ցուցանիշները

Ակտիվներ

320,1 մլրդ. ՀՀ դրամ

Վարկեր

119,8 մլրդ. ՀՀ դրամ

Ներդրումներ արժեթղթերում

50 մլրդ. ՀՀ դրամ

Պարտավորություններ

286 մլրդ. ՀՀ դրամ

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

252,8 մլրդ. ՀՀ դրամ

Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր

9,2 մլրդ. ՀՀ դրամ

Զուտ տոկոսային եկամուտներ

9,9 մլրդ. ՀՀ դրամ

Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ

9,2 մլրդ. ՀՀ դրամ

Ընդհանուր Կապիտալ

34,1 մլրդ. ՀՀ դրամ

Բանկն ամփոփեց 2022 թվականի արդյունքները

4,4 մլրդ. ՀՀ դրամ

2022 թվականի կարևորագույն իրադարձությունները

◆ Արձագանքելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մեր հաճախորդների կարիքներին՝ Յունիբանկը ներդրել է Apple Pay և Google Pay անհայում վճարումների ծառայությունը՝ որպես գնումների համար վճարելու պարզ և կոնֆիդենցիալ միջոց:

◆ Համաշխարհային անկայունության պայմաններում Բանկը մշտապես աշխատել է թղթակցային հարաբերությունների աշխարհագրությունն ընդլայնելու ուղղությամբ՝ հաստատելով վստահելի գործընկերակցություն Միջին Ասիայի, Չինաստանի, Լատվիայի բանկերի հետ՝ ապահովելու հաճախորդների արտաքին տնտեսական և անդրսահմանային վճարումների օպերատիվ իրականացումը: Նախորդ տարվա ընթացքում Բանկում SWIFT փոխանցումների թիվն աճել է 35%-ով:

◆ Մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում բարեկարգվել են «Թիվ 47» և «Աշտարակ» գործող մասնաճյուղերի տարածքները, բացվել են «Հայրենիք» և «Տաշիր» մասնաճյուղերը: Զուգահեռաբար աշխատանքներ են տարվել բջջային հավելվածի թարմացման ուղղությամբ, UniMobile-ի օգտատերերի թիվը 2021 թվականի համեմատ աճել է 65%-ով, իսկ ակտիվ օգտատերերն ավելացել են 155%-ով:

◆ 2022 թվականը հաջող տարի էր պրեմիում բիզնեսի համար: Ծառայությունների և գործիքների հատուկ փաթեթները, շուրջօրյա աջակցությունը, սպասարկման բարձր որակը և յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ ուշադրությունը թույլ են տալիս Բանկին լինել վստահելի գործընկեր, որին կարող է վստահվել ֆինանսական խնդիրների լուծումը: Յունիբանկի Private Banking-ը՝ Unibank Privé-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում Euromoney Global Private Banking Awards 2023-ի արդյունքներով:


◆ Համաձայն AMX Awards ֆոնդային բորսայի մասնակիցների ամենամյա մրցույթի արդյունքների՝ Յունիբանկը ճանաչվել է «Բաժնետոմսերի լավագույն տեղաբաշխող՝ Բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգով»:

◆ Ֆինտեխ արդյունաբերության ինտենսիվ զարգացման պայմաններում Յունիբանկի աջակցությամբ Երևանում անցկացվեց FINTECH360 միջազգային համաժողովը:


◆ Լիովին աջակցելով շրջակա միջավայրի պահպանության և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության աճող միտումին՝ Յունիբանկը սկսեց իր զարգացման ռազմավարության մեջ ինտեգրել բնապահպանական, սոցիալական և կառավարչական պատասխանատվության սկզբունքները: ESG Sustainalytics ոլորտում առաջատար վերլուծական ընկերության փորձագետները հաստատել են Յունիբանկի «կանաչ» պարտատոմսերի թողարկման հայեցակարգի համապատասխանությունը միջազգային չափանիշներին:




Յուսկրանկ ԲԲԸ ակտիվները (մլն ՀՀ դրամ)



Յուսկրանկ ԲԲԸ պարտավորությունները (մլն ՀՀ դրամ)




Յուսկրանկ ԲԲԸ ընդհանուր կապիտալը (մլն ՀՀ դրամ)




ՎԱՐԿԱՅԻՆ ԴՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2022թ. կազմել է 119.8 մլրդ ՀՀ դրամ: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 73%-ը, իսկ արտարժույթով տրամադրված վարկերինը՝ 27%:

Վարկերի արժույթային կառուցվածքը առ 31.12.22թ





Դուսալիուրյուն



<Մայր Հայաստան> ռազմական պատմության թանգարանի մուտքը:
Հսկայական երկփեղկ դուռը շրջանակված է քարի վրա փորագրված
ազգային զարդանախշերով:

Վարկային պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը 31.12.22թ. կազմել է 11.1% նախորդող տարվա նույն ժամանակահատվածի 9.4%-ի դիմաց: 2022 թվականին նոր տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը կազմել է 10.7% է:


Ժամկետանց պարտավորությունների հետ կապված իրավիճակը զգալիորեն բարելավվել է, «Ֆիզիկական անձանց խնդրահարույց վարկերի» տեսակարար կշիռը մեկ տարվա ընթացքում նվազել է 4,2%-ից մինչև 1,9%, իսկ իրավաբանական անձանց խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը 12,3%-ից նվազել է մինչև 8,7% ձեռնարկված միջոցառումների շնորհիվ (բիզնես գործընթացների ավտոմատացում, գնահատման համակարգերի բարելավում, վերակառուցումների իրականացում, հետբերման հետ կապված աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի անձնակազմի պոտենցիալի բարձրացում, վարկավորման շուկայի սեզմենտավորում, խնդրահարույց վարկերի դուրսագրում):

Հատկանշական է, որ «Զուտ(պահուստները հանած) խնդրահարույց վարկեր/նորմատիվային կապիտալ» հարաբերակցությունը տարվա կտրվածքով նվազել է 26,5%-ից մինչև -2,1%:


ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ավանդների ծավալը 2022 թվականին աճել է 30,6%-ով կամ 59,2 մլրդ դրամով և հաշվետու տարվա վերջում կազմել 252,8 մլրդ ՀՀ դրամ: Աճը պայմանավորված է ցպահանջ ավանդների 83,2%-ով կամ 62,5 մլրդ դրամով ավելացմամբ:

Ներգրավված միջոցների կառուցվածքը 31.12.22թ



Ժամկետային ավանդների կառուցվածքը



■ իրավաբանական անձինք ■ Անհատներ

Բանկի ներգրավված միջոցների կառուցվածքում 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գերակշռում են հաճախորդների ավանդները 89% մասնաբաժնով: Բանկի ընդհանուր պարտավորությունների մեջ ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մասնաբաժինը 53,7%-ից աճել է մինչև 66,5%: Բանկի ժամկետային ավանդների կառուցվածքում մանրածախ ավանդների մասնաբաժինը կազմում է 90,1%:

ՄԱՆՐԱԾԱՆ ԲԻԶՆԵՍ

Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2022 թվականին:

Սպառողական պահանջարկի վերականգնումը հանգեցրեց վարկավորման աճին, ինչի արդյունքում ընդհանուր մանրածախ պորտֆելը աճել է ավելի քան 4,8 մլրդ դրամով կամ 6%-ով հասնելով 83,2 մլրդ դրամի: Հաշվետու տարվա ընթացքում նկատվել է վարկառուների կարգապահության բարելավում, ժամկետանցների տեսակարար կշիռը նվազել է մինչև 1,9%:

Անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի գծով գրանցվել է տրամադրումների ծավալի նկատելի աճ: Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման զարգացման նիշային գործիք, այդ վարկերի պորտֆելը հասավ 12 մլրդ դրամի, ընդ որում ժամկետանցության առումով այս պորտֆելը գրանցել է ամենացածր ցուցանիշը՝ 0,1%: 2022 թվականի նոյեմբերին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ստորագրվել է համագործակցության պայմանագիր Արցախի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական ծրագրի իրականացման մասին, և Յունիբանկն իր ակտիվ մասնակցությամբ միայն դեկտեմբերին բավարարել է ավելի քան 20 նպաստառու ընտանիքներ հայտեր:

Գործընկերների ցանցի ընդլայնումը և նորարարական ավտոմատացված համակարգը Յունիբանկին թույլ տվեցին պահպանել առաջատար դիրքերը POS վարկերի քանակով և ծավալով: Արհեստական բանականության տեխնոլոգիայի օգնությամբ 2022 թվականին մշակվել է ավելի քան 400,000 վարկային հայտ:

Մանրածախ հաճախորդների դրամական միջոցներն աճել են 60%-ով և կազմել են 190,2 մլրդ դրամ, ընդ որում ժամկետային ավանդների պորտֆելը մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 103,8 մլրդ դրամ, իսկ ցպահանջ միջոցների ծավալը կազմել է 86,4 մլրդ դրամ՝ 2021 թվականի 13,7 մլրդ դրամի դիմաց:



Եպսկոպոս



Գանձասարի դուռը փայտափորագրություն է, հեղինակը փորձել է փոխանցել արցախյան կոլորիտը, արցախցու տեսակի ուժը և նկարագիրը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Փոքր և միջին բիզնեսին աջակցելը 2022 թվականին շարունակել է մնալ մեր առաջնահերթություններից մեկը: Կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա, մեծացնելով վարկային պորտֆելի ծավալը և շուկայում Բանկի մասնաբաժինը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների հետ հարաբերությունների զարգացման և նրանց համապարփակ սպասարկման կազմակերպման վրա:

Նիշային ուղղություններն էին փոքր արդյունաբերությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և ծառայությունների մատուցման ոլորտը:

Էկոնոմիկայի նախարարության հետ կնքվել է «Տնտեսության արդիականացում» ծրագրի շրջանակներում համագործակցության պայմանագիր, որի իրականացման համար մշակվել է հավանական հաճախորդներին փոխառությունների և ֆինանսական լիզինգի տրամադրման գործիք: Բիզնես գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միկրովարկերի սքորինգային համակարգում ներդրվել է արհեստական բանականության տեխնոլոգիա:

2022 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 36,6 մլրդ դրամ, պորտֆելը դիվերսիֆիկացված է Բանկի վարկավորման քաղաքականությամբ նշված նիշային հատվածներով:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը կազմել է 11,4 մլրդ դրամ, ընթացիկ հաշիվների միջոցների ծավալը՝ 51,2 մլրդ դրամ:



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

Տարեվերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 55 մասնաճյուղ Չայաստանում և Արցախում, 83 պրոմո կետ, 98 բանկոմատ, 106 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը: Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 346.000 հաճախորդների, որից 342.000` մանրածախ:

ԿԱԴՐԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատակիցների համար մոտիվացիոն համակարգի բարելավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:

Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջխաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը: Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կիսում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 831 աշխատակից:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ներքին աուդիտը հանդիսանում է Բանկի անկախ ստորաբաժանում: Ներքին աուդիտի իրավասության շրջանակնը ներառում են ստուգումը, գնահատումը և բանկի անձնակազմի և ղեկավարների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը՝ ուղղված բաժնետերերի և ղեկավարության կողմից բանկի առջև դրված նպատակների իրագործմանը: Ներքին աուդիտի ստուգման և կատարված աշխատանքի վերաբերյալ ամսական հաշվետվությունը, որում ներառված են առկա ռիսկերը բոլոր ուղղություններով և դրանց կառավարման մեխանիզմները, ներկայացվում են բանկի ղեկավարությանը: Տարի մեկ անգամ Ներքին աուդիտն իրականացնում է ներքին հսկողության համակարգի ստուգում, որի արդյունքների հիմնա վրա կազմվում է հաշվետվություն՝ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ իր կարծիքն արտահայտելու համար:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանկում գործում է Համապատասխանության տնօրինություն, որի հիմնական նպատակն է աջակցել ղեկավարությանը ապահովելու Բանկի գործունեության համապատասխանությունը սահմանված կանոններին, ներքին քաղաքականությանը և ընթացակարգերին, օրենսդրական նորմերին: Համապատասխանության տնօրինությունը նաև վերլուծում է հաճախորդների բողոքներն ու առաջարկները՝ սպասարկման որակը բարելավելու և նմանատիպ բողոքները կանխելու նպատակով: Համապատասխանության տնօրինության և մասնաճյուղերի միջև օպերատիվ փոխգործակցության շնորհիվ 2022 թվականին հաճախորդների բողոքների թիվը 2021 թվականի համեմատ նվազել է 27%-ով, և դա այն պարագայում, որ հաճախորդների բազան զգալիորեն աճել է: Համապատասխանության տնօրինության ուշադրության կենտրոնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում վերահսկողության խստացումը, ինչպես նաև Բանկի գործունեության և հաշվետվությունների FATCA-ի պահանջներին համապատասխանության ապահովումը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ռիսկերի կառավարումը բանկում իրականացվում է ճանաչման, չափման և մոնիթորինգի հիման վրա՝ կախված սահմանաչափերից և այլ չափանիշներից: Ռիսկերի կառավարման գործընթացը շատ կարևոր է բանկի համար շահութաբերության անընդհատության ապահովման տեսակետից, և յուրաքանչյուր աշխատակից կրում է պատասխանատվություն իր գործունեության հետ կապված ռիսկերի համար: Ռիսկ մենեջմենթի հիմնական նպատակն ակտիվների և կապիտալի առավելագույն պահպանությունն է՝ ռիսկերի նվազեցման միջոցով: Բանկային ռիսկերի ճանաչումը և կառավարումը ներառված է բանկի աշխատակիցների պարտականություններում, իսկ ռիսկերի կառավարման տնօրինությունը պատասխանատվություն է կրում ռիսկ մենեջմենթի գործընթացների ներդրման և ռիսկերի կառավարման սկզբունքների և քաղաքականությունների իրականացման վերահսկողության համար: Բանկը քայլեր է ձեռնարկում ուղղված ռիսկերի կառավարման ոլորտի վերաբերյալ աշխատակիցների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը՝ մասնավորապես կազմակերպում է դասընթացներ և սեմինարներ:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Բանկում ներդրված են իրավական ակտեր, որոնք համապատասխանում են օրենսդրության պահանջներին և ենթակա են վերանայման տարին մեկ անգամ: Մասնաճյուղերի սպասարկման մենեջերները պատասխանատվություն են կրում ՓԼ/ԱՖ համար, իսկ համապատասխանատվության ստուգումն իրականացվում է ՓԼ/ԱՖ վարչության աշխատակցի կողմից բոլոր նոր բացվող հաշիվների համար: Բոլոր ֆինանսական գործարքները մանրակրկիտ ուսումնասիրվում են ՓԼ/ԱՖ վարչության կողմից և այն դեպքում երբ ՓԼ/ԱՖ հայտնաբերում է կասկածելի գործարք, ամբողջ տեղեկատվությունը փաստաթղթավորվում է և ներկայացվում ՀՀ ԿԲ: Բանկի Ներքին և արտաքին աուդիտներն անցկացնում են տարեկան ստուգումներ՝ ՓԼ/ԱՖ պահանջներին բանկի քաղաքականության և ընթացակարգերի համապատասխանության համար:



Ըստնասպարհի դեպի ևոր որսակ



Աբովյան Տ՝ գրադարան. Երևանի ամենաարժեքավոր պատմական
շինություններից մեկը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՄ

Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմակերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները:

Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներն են՝ Աուդիտի և ռիսկերի հանձնաժողովը, Ներդրումային հանձնաժողովը և Պարգևատրումների հանձնաժողովը: Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Սակագնային հանձնաժողովը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը, Մասնաճյուղային ցանցի կառավարման հանձնաժողովը, Բիզնեսի գնահատման հանձնաժողովը, Անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովը, Անձնակազմի կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտե: Արդյունավետ գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Վարկային սկորինգի հանձնաժողովը և Տենդերային հանձնաժողովը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում իր ուժերն ուղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դիսամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որա՛յալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ◆ ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ◆ ուժեղ թիմ և արդյունքին նպաստակա ուղղվածություն
- ◆ հուսալիություն, կայունություն և հասարակության վստահություն
- ◆ բարեխիղճ վերաբերմունք և էթիկայի բարձր չափանիշների պահպանում

ՄԵՆՔ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ

- ◆ ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ◆ ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ
- ◆ բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ◆ ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը

2023 թվականի ռազմավարական առաջնահերթությունները

Միջնաժամկետ հեռանկարում իրականացման համար Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները և կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով:

- ◆ բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում, 4,5 մլրդ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,
- ◆ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի ուժեղացում՝ ինչպես գործընթացների ավտոմատացման, գործառնական մոդելի փոփոխման, այնպես էլ կադրերի պոտենցիալի բարձրացման միջոցով,
- ◆ մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում, մասնավորապես հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացում,
- ◆ ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում (արհեստական բանականության ամբողջական ներդրում անգրավ մանրածախ վարկերի համար, միկրո բիզնեսի համար անգրավ վարկերի մեքենայական ուսուցման վրա հիմնված սքորինգային համակարգի ներդրում, մարքեթփլեյսի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային սպասարկման համակարգերի զարգացում, հիմնական բիզնես գործընթացների օպտիմիզացում):

ՅՈՒՆԻԲԱՆԿ: ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ



ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

Խորհրդի նախագահ
«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի նախագահ
Ոեգո Ինշուրանս ԱՓԲԸ Տնօրենների
Խորհրդի նախագահ
«Յունիստրիմ» ԲԲԸ - համահիմնադիր,
Տնօրենների Խորհրդի նախագահ



ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ

«Յունիբանկ» ԲԲԸ -
համահիմնադիր, Խորհրդի անդամ,
«Յունիստրիմ» ԲԲԸ-ի
Տնօրենների Խորհրդի անդամ,
«Պրոտոբեյգ Լաբարատորիզ»
ՍՊԸ-ի «Յունիստրիմ» ԲԲԸ -
համահիմնադիր, Տնօրենների
Խորհրդի անդամ



ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

Խորհրդի անդամ



ՋՐԱՅԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Խորհրդի անդամ
Տրանսստրոյբանկի Տնօրենների
Խորհրդի նախագահ



ԷՂՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ

Խորհրդի անդամ

ՅՈՒՆԻԲԱՆԿ: ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



ՄԵՍՐՈՊ ԶԱԿՈՒՅԱՆ

Վարչության նախագահ



ԳՈՐԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ



ԱՐԱՐԱՏ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Վարչության նախագահ առաջին տեղակալ



ԳՈՒՐԳԵՆ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Վարչության նախագահի տեղակալ - մալուխաբանական և միջազգային զարգացման գծով տնօրեն



ՕՎԱՍՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն



ԴԱՎԻԹ ԴԵՏՐՈՍՅԱՆ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն



ԱՊԵՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՅՈՒՐԻԻ

Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն



ՍԵՐԳԵՅ ԶՈՂԱՐՅԱՆ

Ռիսկերի կառավարման գծով տնօրեն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

2022թ. հուլիսին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար, կանխատեսումը՝ կայուն: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR As-sessment)/՝ B2(cr)/ NP(cr) մակարդակի վրա:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

LANDESBANK BADEN- WUERTTEMBERG

BANCA POPOLARE DI SONDRIO

OTP BANK HUNGARY

MISR BANK EUROPE

EURASIAN DEVELOPMENT BANK

BANK OF GEORGIA

ZHEJIANG CHOUZHOU BANKING CORPORATION

BLUOR BANK AS

ESKHATA BANK

FINANCE CREDIT BANK

CB UNISTREAM

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն հաճախորդների համար
+ 374 10 59 55 55 | callcenter@unibank.am

Տեղեկատվություն հաճախորդների համար
Տեղեկատվություն բաժնետերերի համար
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ
հարաբերությունների զարգացման վարչություն

+374 10 59 22 59 ir@unibank.am margarita.hambardzumyan@unibank.am

Բանկի աշխատակազմ

+374 10 59 22 59 anna.badoyan@unibank.am

Տեղեկատվություն ԶԼՄ- ների համար
Հասարակայնության հետ կապերի ծառայություն

+374 10 55 56 86 | lusine.khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5
+374 10 59 22 59, +374 10 59 55 55


Աուդիտոր -Գրանթ Թորնթոն- ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան,
Վաղարշ Վաղարշյան թ., 8/1տ.
Հեռ.՝ +374 10 26 09 64 32

www.unibank.am | corp.unibank.am | prive.unibank.am

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2022թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964
Ֆ. + 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 35.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել է թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմները:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և այլն):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության

անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դեկլարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական

ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:


Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը հանդիսանում է Նաիրա Ուլունց:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն



Նաիրա Ուլունց
Առաջադրանքի պատասխանատու

6 ապրիլի 2023թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2022	2021
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	19,984,152	20,914,648
Այլ տոկոսային եկամուտ	6	3,591	-
Տոկոսային ծախսեր	6	(10,072,314)	(9,956,532)
Զուտ տոկոսային եկամուտներ		9,915,429	10,958,116
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	11,843,885	3,513,711
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(2,685,090)	(640,647)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով գուտ եկամուտ		9,158,795	2,873,064
Զուտ առևտրային եկամուտ	8	14,476,869	3,111,291
Այլ եկամուտներ	9	966,177	565,509
Պարտքային կորուստների գծով ծախս	10	(17,241,935)	(13,073,327)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(5,593,768)	(3,911,514)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(1,203,950)	(1,045,796)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(201,995)	(171,891)
Այլ ծախսեր	12	(4,607,873)	(4,380,314)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		5,667,749	(5,074,862)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	13	(1,270,724)	738,820
Տարվա շահույթ/(վնաս)		4,397,025	(4,336,042)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	<u>2022</u>	<u>2021</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
<i>Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>		
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)	(83,368)	158,173
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	(3,034)	(25,231)
Վերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ	15,552	(23,930)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով գուտ օգուտ/(վնաս)	<u>(70,850)</u>	<u>109,012</u>
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ շահութահարկից հետո	<u>(70,850)</u>	<u>109,012</u>
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	<u>4,326,175</u>	<u>(4,227,030)</u>
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ/ (վնաս)	14 0,0197624	(0,0250802)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 101-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	100,012,097	63,239,222
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	-	5,239
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	31,943,460	16,182,224
Հաճախորդներին տրված վարկեր	18	119,828,158	135,413,053
Ներդրումային արժեթղթեր	19	44,730,472	17,394,144
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	19	5,175,583	-
Հիմնական միջոցներ	20	10,896,975	10,767,377
Ոչ նյութական ակտիվներ	21	3,687,879	2,728,749
Հետաձգված հարկային ակտիվ	13	-	480,335
Կանխավճարներ շահութահարկի գծով		-	310,366
Այլ ակտիվներ	22	3,791,168	6,302,758
Ընդամենը՝ ակտիվներ		320,065,792	252,823,467
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	16,603,170	10,906,695
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	252,805,069	193,643,724
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	5,246	10,867
Փոխառություններ	25	4,278,478	3,121,387
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	9,147,395	12,168,789
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		311,014	65,120
Հետաձգված հարկային պարտավորություն	13	281,440	-
Այլ պարտավորություններ	27	2,517,120	2,135,833
Ընդամենը՝ պարտավորություններ		285,948,932	222,052,415

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2022թ.	31 դեկտեմբերի, 2021թ.
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	28	21,588,653	21,588,653
Էմիսիոն եկամուտ		9,605,638	9,605,638
Գլխավոր պահուստ		641,779	641,779
Այլ պահուստներ		1,484,830	1,732,279
Զբաղիված շահույթ/(կուտակված վնաս)		795,960	(2,797,297)
Ընդամենը՝ սեփական կապիտալ		34,116,860	30,771,052
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		320,065,792	252,823,467

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023թ. ապրիլի 6-ին:

Հակոբյան Մեսրոպ

Վարչության նախագահ

Գոհար Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 101-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ/ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	45,867	1,686,412	(2,797,297)	30,771,052
Տարվա շահույթ	-	-	-	-	-	4,397,025	4,397,025
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(176,599)	176,599	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն	-	-	-	(83,368)	-	-	(83,368)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ	-	-	-	(3,034)	-	-	(3,034)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	15,552	-	-	15,552
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(70,850)	(176,599)	4,573,624	4,326,175
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(980,367)	(980,367)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-	-	(980,367)	(980,367)
Հաշվեկշիռը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	(24,983)	1,509,813	795,960	34,116,860

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ/ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	20,489,653	9,605,638	608,510	(63,145)	1,785,780	1,472,646	33,899,082
Տարվա վնաս	-	-	-	-	-	(4,336,042)	(4,336,042)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(99,368)	99,368	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն	-	-	-	158,173	-	-	158,173
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ	-	-	-	(25,231)	-	-	(25,231)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(23,930)	-	-	(23,930)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	109,012	(99,368)	(4,236,674)	(4,227,030)
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,099,000	-	-	-	-	-	1,099,000
Հատկացում պահուստին	-	-	33,269	-	-	(33,269)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,099,000	-	33,269	-	-	(33,269)	1,099,000
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	45,867	1,686,412	(2,797,297)	30,771,052

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 101-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2022	2021
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	5,667,749	(5,074,862)
<i>Ճշգրտումներ</i>		
Պարտքային կորուստների գծով ծախս	17,241,935	13,073,327
Այլ ակտիվների իրացումից վնասներ	34,468	-
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,405,945	1,217,687
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	26,546	87,869
Ստացվելիք տոկոսներ	(19,581)	(19,744)
Վճարվելիք տոկոսներ	108,607	208,716
Ածանցյալ գործիքների վերագնահատում	(382)	(22,688)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ (օգուտ)/վնաս	(150,124)	802,043
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</i>	24,315,163	10,272,348
<i>Ավելացում/(նվազում) գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(19,625,210)	460,850
Հաճախորդներին տրված վարկեր	(13,790,008)	830,829
Այլ ակտիվներ	3,188,011	(716,485)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12,198,555	3,103,708
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	90,486,543	48,971,949
Այլ պարտավորություններ	275,647	8,272
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	97,048,701	62,931,471
Վճարված շահութահարկ	-	(195,967)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր	97,048,701	62,735,504

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2022	2021
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ներդրումային արժեթղթերի առք	(34,939,608)	(1,717,970)
Հիմնական միջոցների առք	(950,260)	(1,180,730)
Հիմնական միջոցների վաճառք	494,620	210,719
Ոչ նյութական ակտիվների առք	(1,161,125)	(598,738)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	(36,556,373)	(3,286,719)
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	1,099,000
Շահաբաժինների վճարում	(543,224)	-
Ֆինանս. կազմակերպ. վարկերի մարում	(4,914,832)	(21,092,453)
Պարտքային արժեթղթերի թողարկում/(մարում)	(1,433,631)	3,534,522
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(799,130)	(707,581)
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ներգրավում/(մարում)	1,518,594	(2,583,135)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	(6,172,223)	(19,749,647)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	54,320,105	39,699,138
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	63,239,222	28,450,237
Պարտքային կորուստների պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	-	15,497
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(17,547,230)	(4,925,650)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 15)	100,012,097	63,239,222
Լրացուցիչ տեղեկատվություն`		
Ստացված տոկոսներ	19,964,571	20,894,904
Վճարված տոկոսներ	(9,963,707)	(9,747,816)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 101-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Հաշվետվություն թիվ 01, 20.05.2022

Վարչության նախագահի գրքում լի ստորեն



Մեսրոպ Հակոբյան